

ՊԱՅՄԱՆՔ

Հարկան գին Կ. Պոլսոյ համ. 10 Մճ.
Պատուագ 12 »
Վերան. Կ. Պոլսոյ 5 »
Պատուագ 6 »
Կտար. երկիրներու 21/21.
Մանուցման արդը մէկ անգամի հա-
մար 3 դուրոյն, երկու անգամի հա-
մար 2 դուր է. աւելի անգամներու
համար դատ սահարկութիւն կըլ-
այ :
Խրաքանչիւր թիւ 40 փարսարծ :



ԼԵԱՔԵՐ

ՀԱՆԱՊԱՉՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Կտար. Կ. Պոլսոյ համ. 10 Մճ.
Պատուագ 12 »
Վերան. Կ. Պոլսոյ 5 »
Պատուագ 6 »
Կտար. երկիրներու 21/21.
Մանուցման արդը մէկ անգամի հա-
մար 3 դուրոյն, երկու անգամի հա-
մար 2 դուր է. աւելի անգամներու
համար դատ սահարկութիւն կըլ-
այ :
Խրաքանչիւր թիւ 40 փարսարծ :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 2 ՅՈՒՆԻԱՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Երէկ նոր տարին սկսաւ և այս
տարի անօգուտ չլինիր անհաւատի
անհաւատ տարուան անցից և ա-
պագային վրայ :

Անցեալ տարին բաւական դէպ-
քերով լի եղաւ : Անգղիա երկու պա-
տերազմի ձեռնարկած էր Աֆղանս-
տանի և Չուրուստանի երկրներուն
մէջ, որոց երկուքն ևս յաջողութեամբ
ի գլուխ հանեց :

Աֆղանստանի պատերազմը՝ սեպտե-
մբերին Քեհապիլի մէջ Անգղիական դեռ-
պանտան վրայ եղած յարձակման
և անոր հետեանքն եղած չարդին
պատճառաւ նորէն սկսաւ : Բայց դեկ-
տեմբերի ամիսը դեռ չվերջացած
Անգղիացիք երկրորդ անգամ Քեհա-
պիլի տիրեցին, և իրենց զբաւումն
հաւանականաբար երկար պիտի տևե-
քանզի թէպէտ և ընդդիմադիր մա-
սը ևր պահանջէ որ Աֆղանստան պար-
պուր, սակայն նախարարութեան
կուսակիցները կը պատասխանեն թէ
կարելի չէ բարբարոսութեան վիճա-
կի մէջ թողուլ Հնդկաստանի սահմա-
նակից երկիր մը, որոյ պատճառաւ
ոչ միայն մեծագուծաւ ծախիւք սահ-
մանազուլը զօրք պահել պէտք կը
լինի, այլ և մերթ ընդ մերթ պատե-
րազմերու հարկ կը տեսնուի միջադ-
դային օրինաց դէմ դրոշմաւ բըւ-
նաբարութեանց հեղինակները պատ-
ժեւու համար : Անգղիացիք կը հաշ-
ւեն որ Աֆղանստանի եկամուտը չորս
միլիոն լիւրա Սթըլինի կընայ համար
ուստի զինուորական գրաւմամբ նիւ-
թագէտ ալ չահաւէտ գործ մը տե-
սած կընան լինի, և տեղական մե-
ծերու թողանքը վճարելէ և կառա-
վարութեան ծախքը հանելէ յետոյ,
զինուորական ծախքերն ալ կընան և
կառաւարութեան հայրաքանիւր գրաւե-
հօք Անգղիոյ Աֆղանստանը գրաւե-
լէն կընայ Ռուսիոյ հետ բախում մը
հետեւի, ինչպէս ոմանք կը դուշա-
կեն, եթէ ոչ, ըստ Բեդրասպուրի
կէս պաշտօնական հրատարակու-
թեանց՝ բարեկամական համաձայնու-
թիւնը նախամեծար պիտի համարին
այդ երկու քաղաքակիրթ տէրու-
թիւնք Ռուսի մէջ սահմանակցութիւ-
նը խաղաղութեան համար աւելի չը-
պատասխար դատելով՝ քան թէ մի-
ջանկեալ խուժափու իշխանութիւն-
ներ պահելով Սիւս խնդրոյն պատաս-
խանը կանխահաւ և Ռուսիոյ երկի-
րեն ապստանեալ Ապուլ-Բահման
խանը Ռուս պաշտօնատարաց հրակո-
ղութենէն փախչելով Աֆղանստան վե-
րադարձած է, անշուշտ պիտի ջու-
րի մէջ որս գտնելու համար, իսկ
պարտեալ Աֆղան զորավարներէն Նէք-
-Մէհմետ խան և Հիսսէյին խան

Ռուսիա ապստանած են : Ռուսը
ուրեմն կեդրոնական Սիւսացոց հետ
սերտ յարաբերութիւններ ունին, և
Անգղիացոց իրենց հրախալի մեծ
ստիպէն ունեցած կառավարները չեն
կրնար բոլորովին տարապարտ լինիլ :
Մէրվի դէմ Ռուսիոյ արշաւանքը վայր-
կենական անյաջողութիւն մը կընց,
բայց զարուհն աւելի զօրութեամբ
յուսում պիտի տարուի, և Ռուսը ա-
ռաւել ևս Հնդկաստանի պիտի մեր-
ձենան :

Ներքին ծանր տաղանդ մը կըլու-
ղէ զՌուսիա. անցեալ տարուան մէջ
կայսեր կենաց դէմ՝ երկու դաւադ-
րութիւնք եղան, և Ռոյսականք կը
յանգդին մինչև անգամ Ռուսիոյ
գեապանաց յայտարարութիւն մը զր-
կելով կայսրը դահէն տապալելու ըս-
պառնայիք ընել, եթէ՝ ըստ ժող-
վրդական բաղձանաց՝ Ոսկանադ-
րութիւն մը չտայ : Կառավարութեան
խտուութիւնները բնաւ չկրցին այս
ըմբոստ յեղափոխականները զսպել,
որք ներքին մեծ վտանգ մը կը կազ-
մեն և որոյ ազդեցութեան ազդեցու-
թիւնը ապագայի միայն պիտի ցուցնէ :

Եւրոպիոյ աշխարհագրութիւնն
անցեալ տարի ամուլ եղաւ : Տէրու-
թիւնք մեծ մասամբ ներքին գործովք
զբաղեցան, և նախարարաց ստեպ-
փոփոխութիւնք եղան : Եւրոպական
մեծ դէպքերէն մին կընայ համար-
ւիլ Գերմանիոյ և Աւստրիոյ համա-
ձայնութիւնն, որ կըսուի թէ խաղա-
ղութիւնը պահպանելու համար կըն-
քուած է, բայց իրօք վարձինք ըմ-
փինքին՝ Պրուսիոյ Նիման գաղտնիք
մ'է :

Արեւելից վիճակն անցեալ տարի
ընդհանրապէս տաղանդալից եղաւ,
և նոր տարին դեռ բնաւ բարեփոխ-
մը չընեալ դժբաղդաբար Օսմանեան
կառավարութիւնն հազար և մի դըժ-
ւարութեանց դէմ մարտահրաւր-
ւած : Կոնստանդնուպոլսէն, սա-
կայն սահման մեծ յաջողութեան. շատ
ինքնիշխան առ կալ կը քնան և ա-
պագային փոթորիկները ապառնայող
մութ կէտեր կը կարծեն : Եթէ իրեն-
քիրներ ևս լուծուեցան, ինչպէս է
երկրական վերջին պայմանագրութիւ-
նը, Եւրոպիոյ հաւանութիւնն ու
վստահութիւնը չ'ստացան, որք յա-
ջողութեան հաւան պայմաններ են :
Հոգովութեան հաւան պայմաններ են :
Կասկած կը յայտնուի թէ Ղալթիկոյ
սեղանաւորաց թողուած եկամուտ-
ներն հարկաւոր եղած գումարը չը
կընան կազմել : Պէրլինի թերթ մը
Թուրքիոյ երկրական վիճակին վրայ
աշխարհի չափազանց և յուսաբեկ
կարծիք մը կը յայտնէ, որ անոր ա-
պագայն ստակ չունեցող մարդոց ա-
պագային նմանեցնելով՝ Գերմանիոյ
համար բաժին կը խնդրէ, իբր թէ
բացուելու մօտ ժառանգութիւն մը
կենար : Բարեբաղդաբար՝ Օսմանեան

երկիրն այսպիսի շատ չարագույն շակ
մարդարեւութիւններ անցուցած է, և
տարակոյս չկայ որ այս անգամ ալ
կընայ անցունել, թէպէտ այս վերա-
շինութեան գործը բաւական ժամա-
նակի և անդու աշխատութեան կը
կարօտի : Պ. Միլլէի տնտեսաբան
նախագիծն Անգղիոյ դիմագրութեան
կը հանդիպի, և այս առթիւ Գաղղի-
ացի թերթ մ'Անգղիոյ ետեւութեան կը
քննադատէ յիշել տալով թէ Անգ-
ղիա միշտ « Ես և դարձեալ ես և իմ
շահերս » ըսել կուզէ :
Ազգային գործող մէջ եթէ անց-
եալ տարի բարեփոխման նշող մը չե-
րեցաւ, ազգասիրաց սրտին դոնէ
բաւական սփոփանք տուաւ ազգային
զգացման և միութեան այն գեղեցիկ
չարժաձի, որ կընայ բեղմնաւոր ա-
պագայ մը խոստանալ, եթէ լաւ մը
չակուի :

Թան լրագրոյ Կ. Պոլսոյ թղթա-
կիցն յիշեալ լրագրոյ գեկու 31 թիւ
թերթին մէջ հրատարակեալ նամու-
կովն հետեւեալ կերպիւ կը խօսի փո-
քըր-Պոլսոյ գործող վրայ :

« Պէրլէր փաշան Հալեպ համե-
լուն հոն բանտարկեալ 120 ի չափ
Քիւրդ Պէրլէր և Աղաներու խնդ-
րով պիտի դարձի անշուշտ : Ասոնք
ամենաշար տեսակէն մարդիկ են,
ինչպէս որ անոնցմէ մին և բոլոր այդ-
տեսակ մարդոց տարաբնակ Պէրլէ-
րաճ պէյ անուն անձին վրայ քանի
մը տեղեկութիւն տալ բաւական պի-
տի լինի հաստատելու : Այս Քիւրդ-
դուլը Տիարապէրի կարգան գաւա-
ռին պատուհան էր, և ինք ալ իւր
անձին « Կարգան փառնաճը » տաղա-
քը տուած էր : Հոն Ժափար անուամբ
հարկուր չափ տունէ բաղկացեալ Հայ
գիւղ մը կայ : Պէրլէրաճ պէյ այդ-
գիւղին բնակիչները կը վանէ, եկե-
ղեցին ախոռի և ամբողջ գիւղն ու
չըջակայքն ընդարձակ ազաւարակի մը
կը փութէ (1) : Հոն նաեւ վանք մը կայ

(1) Կարգան տեսարանին մէջ այսպիսի
չարագործութիւնք շատ պատմուած են
Մանաւանդ Քիւրդ վիճակին վրայ Սէր Է-
Լէյքըրի կողմէն Պ. Թրօթթըրի գրութեան
ընդարձակ և լաւ գրուած տեղեկագիր
մը, զոր եթէ ամբողջագրէ թարգմանել
հարկ լինի, Մասիսի մէկ թիւը կընայ լը-
ցնել, և զոր իրեն հազարողորին տունը
չէ յայտնած Անգղիոյական դեսպանը, Քը-
զի կողմէր գործուած այսպիսի բազում
խրոզութիւններ կը յիշէ ընդարձակ մանրա-
մասնութեամբ : Մանաւորացի, գիւղի
մ'անուն կուտայ, որոյ մէջ տեղը Քիւրդ-
պէյ մ'ապարանք ինեկ տուեր է : արք-
այս ապարանքն Հայոց եկեղեցոյն խիստ
մօտը կառուցեալ էր, որով գիւղին Հայ
կանայք կիրակի օրերն եկեղեցին չկարե-
նայ երթալ կ'սկսին, որովհետեւ Քիւրդ
պէյին օրդիքն ու ծառայները տան տու-
ջն չըջագոյնելով, ստորակալն զբոսանք

Սրբոյն կանանսի նուիրեալ Այդ փոք-
րիկ բունաւոր վանականաց հոգե-
րուն, ոչխարներուն և աղաւաղային
դործիքներուն տիրած է. և ըստ ու-
րում գործնական մարդ մ'է և հա-
ճելին ալ օգտակարին պէս անասն չը-
ներ, ընտիր Հարէմ մը կազմած էր
չըջակայ գիւղերէ խել մը դեռահաս
այգիկներ և մանկամարդ կիներ ի-
րենց ընտանիքէն կորզելով :

« Ինչպէս որ կըսուի, այդ փոք-
պէյներն այժմ մայրաքաղաքին մէջ ձեռ-
նարկներ կընեն ներս մ'ստանալու
համար : Չկրնար ընդունուիլ որ կեդ-
րական կառավարութիւնն անոնց
աղերսներովն ի դուր չարժի (1) : Որով
հետեւ նոքա՝ Հալեպ բանտարկեցան
նոյն խակ իւր ֆոփոխեաց միջոցաւ, և
այս ալ, իրենց չարագործութեանց
տեղեցին վրայ ամեն ինչ թիւն կա-
տարուելէ ետեւ : Ասից զատ, եթէ
այդ մարդիկ դարձեալ այն երկիրը
վերադառնան, յորմէ արաւաքեցան,
անգլիոյ մը վրէժ պիտի լըծեն ժո-
ղովրդէն, և տարակոյս չկայ թէ Պէյ-
քըր փաշան այս խնդրն ինչպէս պի-
տի աւանդ : Իրական ծառայութիւն
մը պիտի մատուցանէ՝ Քիւրդ գիւղացի
և անոնց զոհերուն մէջ և ամուր բան-
տի մը լաւ փակեալ դռները պատուար
մ'ընելու հարկը կըլք բնական կառա-
վարութեան բացաւրելով :

« Այս բանն աւելի կարեւոր պիտի
լինի մանաւանդ սա պատճառաւ թէ
նախարարութիւնն ամեն Քիւրդ գըլ-
կոց դէմ խոստովանէ և զսպողութեան
թեան պիտի ընթացից ցնցուի :
Այսպէս ամեն մարդ գարմացաւ երբ
լսեց թէ Շէյխ Ռապիտալլահ, իւր
որդին Ապա-Լը-Գատէր և իւր վա-
նայ դործակատարը կառավարութեան
կողմէ պատուանշան ստացած են :
Մինչև անգամ Մէքքէ-Փայէսի տիա-
ղոսը արուեցաւ Շէյխին : Որդ, յիշ-
եալ Ռապիտալլահ Շէյխը տիւտը
համարաւ մ'ստացած էր Հայազգի
խաղաղ երկրորդործաց վրայ ի գործ
դրած անթիւ կեղեքումներովն, և
սակայն այս պարագայն չարքելուր

մ'ըրած էին իրենց եկեղեցի դնացող կա-
նանց այլ և այլ չարութիւններ ընել :
Շատ Հայեր գիւղէն մեկնելով ուրիշ տեղ
փոխադրել կ'ստիպուին իրենց ընտան-
եաց պատեւը սահպանելու համար :

(1) Եթէ ի դուր չարժի, ստաճին ան-
դամը չլինի, ժամանակաւ ամենահա-
ղաւոր կերպիւ Պալատիս ուղարկուած
բազում չարագործ և ապստամբ Քիւրդեր
ալ կեդրոնական կառավարութեան հոգե-
թը չարժեալով և վերատին Հայաստան և
Քիւրդաստան զրկուած էին, և անոնք ալ
այնպիսի վրէժ մը լուծած էին տեղական
իւր ժողովրդէն : որ այժմ խակ շատ
տեղերու բնակիչք չեն համարձակել
դատ բառնալ զիրենք հարստահարող պէ-
յիւնըն դէմ :

Թուրք լրագիրները ֆալսեփաշ տխուր
սը տալէ այդ անձին :

« Նախարարութիւնը Բիրդերը
չափազանց չգործնաշնորհաբար և հե-
տեալաբար զանազան յայտարարութիւն
չմղելու համար այս տարօրինակ որո-
շումն բրաժ լինելու է : Մասին Հայ
լրագիրը , գործն այդ տեսակետէն
քննելով , խիստ իրաւացի կերպիւ
կրտէ որ եթէ ներկայ պարագայից
մէջ հասկանալի է որ կառավարու-
թիւնը մեղմով վարուի Բիրդաց զին-
հալ ժողովրդեան հետ , ու է կեր-
պիւ ընդունելի չկրնար լինիլ որ այդ
գործարարութիւնը Բիրդաց ցեղէն եղող
սորադորմայ վրայ տղ տարածի : Մա-
սին գիտե՛լ կուտայ թէ այսպէս գոր-
ծելով կառավարութիւնն իւր նըպա-
տակին հակառակ արդիւնքի մը կը
հասնի Հաղարար խաղաղասէր Հա-
յեր կը կեղեքուին , և իմաստակա-
րութիւն կը լինի զանազան չկարենալ
պաշտպանելու առարկութիւնն ընելի
որովհետեւ յաճախ կը պատահի որ
տրդի խեղճ ստիկանը Հայաստանի
մէջ Բիրդ սծրագործներ կը ձերքնա-
կուին , բայց այդ սծրագործք չեն
պատմուիր Այսու ամենայնիւ Թուրք
լրագիրք կը յայտարարեն թէ բարե-
նորոգումները գործադրուած են :

(Հոս Թանի թղթակցին համառու-
տիւ կը թարգմանէ Մասիսի մէջ քա-
նի մը շարքով տալով « Բիրդերն և
Արտիկան բարենորոգումներ » խորագ-
րով հրատարակելով , յօդուածին սա
հատուածը . . . « Երբ անկերե
կը տեսնեմք թէ մինչև ցարդ հզօր
ձեռք մ'ամենաշար տեսակէն եղող
Բիրդերն անդամ պաշտպանած է
այն միւս ձեռքին դէմ , զոր արդարեւ
բնաւ չէր կ'անուանեն բանաստեղծ-
ներն , և որոյ գործադրարար մատե-
կուն ծայրն անգամ չեն տեսնուի
Հայաստանի մէջ . երբ նոյնպէս կը
տեսնեմք որ այդ պաշտպանութիւն-
ներն ոչ օրինաւոր է և ոչ հարկաւոր ,
այլ ընդհակառակն՝ անհունապէս
փնտաւար է , և երբ կը տեսնեմք
որ միակ օրինաւորն և միակ հար-
կաւորն ու օգտակարն օրինաց ան-
խախտ գործադրութիւնն է , ուե-
լով չեմք համարիր , քանի որ բա-
րենորոգման դարձում մէջ մտած
եմք կամ մանկու վրայ եմք կըսուի
հարցնել՝ յանուն բողոքութիւն դրժ-
բաղդ ժողովրդեան մը՝ թէ Բիրդ
սծրագործաց դէմ յայտարարուած այս
պաշտպանական և անտեղի գործունե-
քնն տակէ ետքն այլ պիտի չարու-
նալէ , թէ այսուհետեւ այլ տէրու-
թեան օրէնքներն առաւելու պիտի
լինին ամենապատշաճ ձևով համար ,
և թէ վերջապէս դառաւայ մէջ կա-
ռավարութեան պաշտօնատարները
երբ պիտի սկսին օրէնքն ի գործ դե-
նել : »

« Օրինաց գործադրութեան (կը
շարունակէ Թանի թղթակցին) այս-
պէս հրաւեր կարգալէ պէտք չէ բը-
նաւ դադարել : որովհետեւ հարաւու-
հարուստ ժողովրդէն անդադար դան-
դաւանել կուգան :

« Բարեբերդի մէջ , կարուածապէ-
տական աւանդութիւնները շարու-
նախող գլուխներէն մին , այն է Մէմ
օղլու անուն անձը , կայսերական քո-
միսէրաց հրամանաւ ձերբակալուած
լինելով , իւր ընտանիքն ու կուտա-
կիցները խօզ-աղբիւր դիւզին և մաս-
նաւորապէս Ներսէս յաջանային տան
վրայ յարձակում ըրին : Բաջանային
հայրը , մայրը և կինը ծանր կերպիւ
վերաւորեցան և ինք ալ (քահանային)
յարձակողաց դէմ դնող դեղացիներ
բուն գլուխը կեցած սպանուեցաւ :
Միւս կողմէն , ձերբակալեալ Մէմ
օղլուն ալ աղատ թողուեցաւ :

« Վարնայ մէջ հասարակաց ապա-
հովութիւնը խիստ դէժ վիճակի մէջ
է : Տրապիզոնի կողմն այլ այնպէս է :
Քանի մը տեղեր խաւով քրիստոնէ-
ից հետ միանալով , տեղական ժողո-
վուրդը կեղեքող Աղայից դէմադեր-
սագիր տուին իշխանութեան :

« Միով բանիւ , Անգղիական կա-
ռավարութիւնն իւր ստանձնած պար-
տականութիւններէն յետոյ՝ ուրիշ
բան չկրնար ընել՝ բայց եթէ նոր սա-
տիկանութեան կազմութիւնը փու-
թացնել (1) , եթէ լաւ բաղադրի , և
կանոնադրապէս թողակ ստանայ ,
այդ ստիկանութիւնը բաւական մեծ
բարեք մը պիտի իրաջնէ բարենո-
րոգմանց առաջինն հաստատելով ,
այն է հասարակաց ապահովութեան
պահպանութիւնը : »

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտոն 10 յունիս
Կը հաւատեն թէ կառավարութիւնը
խորհրդարանին բացուելէն անմիջապէս
յետոյ երևաւորացը պիտի ներկայէ , և
այս աճապարանքը խորհրդարանին լուծ-
ման հաւանականութեան ապացոյց կը
համարեն :

Ազատական լրագրաց կարծիքն է
թէ Աֆղանստանը պարպելու համար ի-
րաւախոհութիւն մը կրնայ դառնալ , այն
է՝ յայտարարել Աֆղանացի թէ իրենց եր-
կիրը չպիտի անուի , և թէ պատերազ-
մը Շիր Ալիի դէմ բացուեցաւ և ոչ Աֆ-
ղան ժողովրդեան դէմ : Երբոր Անգղիա
երկիրը գրաւելէ և Քեհադիլի մէջ մնա-
յուն գործակատար մ'ունենալու պահան-
ջէն ետ կենայ , Աֆղանացի թղթակցները
կը հաճին Աֆղանստանի արտաքին աշ-
խարհակարութիւնն Անգղիոյ հակադե-
մութեան ներքեւ դնել , որով պատերազմին
զլխաւ որ նպատակը ձեռք բերուած կը
լինի :

Վիէննա 10 յունիս
Այս հրատարակեալ տեղեկագրերէ
կը հասկնան թէ պատերազմէն յետոյ Ա-
ւստրիոյ ձեռք Պոսնի վերադարձող
10*,900 զալթակառք այսօր իրենց նոր
տուններուն մէջ գետնելուած են , և ա-
մենն ալ արքայու համար պաշտօնաւոր ու-
նին :

Պէրլին 11 յունիս
Գիւղերու մէջ ցրուելու սահմանեալ
յեղափոխական յայտարարութիւնը զըս-
տեցան Մոսկուայի մէջ Անգղիա-
կան զինանախարարութիւնը զարմանալի
կերպիւ անյայտ էլաւ : Լորտ Մալիսպը-
րի մենտորական ծանուցողաց վրայ՝
Մալիսպըր փաշան փութացած էր խոստա-
նալ թէ Եւրոպացի սպայք պիտի գոր-
ծածուն նոր ստիկանութեան կազմու-
թեանը մէջ : Սակայն , թայպիլի և Տէյլի
Նիւզի թղթակցները միտադնութեամբ
կը ծանուցանեն թէ Ղադի Օսման փաշան
այս նոր ստիկանութեան միկնային հաս-
տատանութեամբ դէմ դրուէ , որով եր-
բմն պաշտպանած էր Բլէյքման : Միայն
թէ , կը դիտեմք մեք ալ , ամեն Բլէյքմա
չկրնար տարժեքի լինիլ Անգղիոյ , և այ-
ժմով՝ ստիկանութեան համար Անգղիա-
յէն բերուած սպայից պայմանագրովին
լրանալուն (յառաջիկայ յունիս) կ'սպասուի
եղեր զանազան արձակելու համար , և ար-
դէն անանք՝ բայց երկուքէն՝ անգործ
կենալով թողակ ստանալէ ուրիշ բան չէ-
ն կրցած ընել մինչև ցարդ : Միւս կող-
մէն , Պէյքըր փաշան ամենապարտաւ-
ձըն էր Հայաստանի կողմը նոր ստիկա-
նութիւնը կազմելու . ինք արդէն այս
պաշտօնով Թուրքիա եկած էր , և Սըր
Լէյքըր ալ զինք այդ տիտղոսով կ'առա-
ջարկէր Բ. Գրան . բայց նախապատիւ
համարուեցան անորոյ պաշտօնն մը յանձ-
նել իրեն , քան այնպիսի գործ մը , յո-
րուս կրնար իրական ծառայութիւն մը
մատուցանել երկրին :

Բերլին և թէ իրենց ալ իրանտաղի վար-
ձակալաց հեռեկալով՝ պէտք չէ բուն մը
վճարեն կառուածաւորաց :

Կը նշմարուի սակայն թէ Անգղիական
նոր հրատարակութիւններն աւելի չափա-
ւոր լեզու մ'ունին , որ աւելի վտանգա-
ւար կը համարուի :

Լոնտոն 12 յունիս
Ռուս լրագիրքը դարձեալ թշնամու-
կան լեզու կը գործածեն Գերմանիոյ դէմ ,
յորմէ կը մակարերուի թէ երկու տէրու-
թեանց մէջ համաձայնութիւնը կատար-
եալ չէ :

Մօրնինի բալթ կը ծանուցանէ այս
առաւօտ թէ Միւսկուրիս փաշան Հայթ-
Քիւս երթալով լորտ Մալիսպըրի հետ
տեսակցելէ յետոյ՝ երէկ իրիկուն Լոնտո-
նա վերադարձաւ :

Անգղիոյ դեսպանատան և Բ. Գրան
միջեւ պաշտօնական յարաբերութիւնը ան-
միջապէս պիտի վերականգնուի :

Վիէննա 12 յունիս
Պարոն Հէյմսը յայտարարեց Հուն-
գարական պատուիրակութեան թէ Գա-
րատաղի սահմանադրութեան խնդիրը ծանր
կերպարանք մ'առած է :

Այս առաւօտ հասած Գերմանիոյ
Լոնտոն 13 յունիս
Վիէննայի կը հեռագրեն Սթէնտըր-
աի թէ ոչ Պ. Մալիսպըր (Պէրլինի Ռու-
սական դեսպան) ոչ ալ Պ. Մալիսպըր
(Վիէննայի դեսպան) Լեհաստանայ մէջ
Ռուս գործը համախմբման վրայ որ և է
բացատրութիւն չեն տար :

Վիէննա 13 յունիս
Վիէննայի դիւտորական տիպոց ե-
կած վերջին տեղեկութիւնը Արեւմտեան
սահմանադրութեան վրայ Ռուսական գործը
համախմբման վրայ չեն հաստատեր :

Փարիզ 13 յունիս
Պ. Կամպիթթա 508 քուէարկուաց վը-
րայ 259 քուէով վերադարձաւ իրանտաղի
ընտրեցաւ երեսփոխանական ժողովին :

Լոնտոն 13 յունիս
Սոմ. Քոնս. 10
Եղիպտ. 84 7/8
Անգլ. Քոնս. 97 7/8

Փարիզ 13 յունիս
Սոմ. Քոնս. 10
Գաղղ. 80 0/0 116,50

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Եւգենիոյ (Թ. օրատ) Գայմադա-
մութիւնը Միւթեսարթութեան փոխ-
ւեցաւ , և Սերասարի բարենորոգ-
մանց յանձնարարին (1) առաջին քա-
տուղար Բեռնի պէյ կառավարիչ ան-
ւանեցաւ այս նոր Սանճագին , որոյ
հետ միացուեցան Նիքարի Գայմա-
դաւութիւնն , որ ճանիքի Միւթե-
սարթութեան կը վերաբերէր , և
և Զիլէի և Լրպապի Գայմադաւութե-
աններն , որք Ամասիոյ Միւթեսար-
թութեան ներքեւ էին :

Վեհ : Սուլթանն Առաջին նախա-
րար Բարձր Սայիտ փայային բարի
ծառայութեանց ի վարձատրութիւն ,
երկու շաբթի օրը Նիշանը-իմթիեազ
անուն Օսմանեան ամենաբարձր պատ-
ւանշանը տուաւ անոր իւր ձեռքը :

Ն. Կ. Վեհափառութիւնը նաեւ
առաջին կարգի Մէճիսիէ պատուա-
նշան տուաւ ստիկանութեան նա-
խարար Վաւեմ Հաֆիզ փաշային :

Աճապարակ խնդիրը վերջա-
պէս լուծուած զտաւ : Ստիկանու-
թեան նախարարին ապօրինաւորա-
պէս գրուած թուղթերը Բեյօլէր մի-
սիօնարին ետ տրուեցան : Աճապար-
կան Շէյխիւլ-իսլամի պաշտօնատան
բանալէն արձակուեցաւ : Ստիկա-
նութեան նախարար Հաֆիզ փաշան
անձամբ գնաց և զայն (հօտան) իւր
կառ. քնն մէջ առաւ : Հօտան պաշա-
ւոր տարուելով՝ Վեհ : Սուլթանին
շնորհակալութիւն յայտնեց իւր ար-
ձակման առթիւ , և Հօտան ընտու-

նիքն Անգղիական դեսպանատանն
երթալով քարտադրութիւն յայտ-
նեց Սըր Հէնրի Լէյքարտի ազնիւ ջա-
նից համար : Հաֆիզ փաշան ընտա-
կանաբար պաշտօնակ չեղաւ , որով-
հետեւ անոր գործոց պատասխանա-
ւորութիւնը վեհ : Սուլթանն իւր
վրայ առաւ , և այսպէս աղտեց ու-
տիկանութեան նախարարը խիստ յո-
ռի գիրքէ մը : Աճապար Հօտան ժամա-
նակ մը Բիստ կղզին պիտի բնակի ,
և այն միջոցին իւր ընտանեաց թու-
շակ պիտի արուի : Միով բանիւ ,
ըստ Մօնիթէօր տիւ Բօմբըրի , Վեհ :
Սուլթանը խաբելու և Անգղիոյ դէմ
թշնամութիւն գրգռելու համար եր-
կար ժամանակէ ի վեր գործող գաղտ-
նի ազդեցութեանց հակառակ , Սըր
Հէնրի Լէյքարտի հաստատաւորութիւ-
նը և Վեհ : Սուլթանին առողջ դա-
տողութիւնն ամեն դժուարութեան
յաղթեցին :

Աճապար Հօտայի խնդիրը կնքադ-
րուած լինելով , մայրաքաղաքիս
Անգղիական դեսպանն Օսմանեան
կառավարութեան հետ դիւանագի-
տական յարաբերութիւնները վերա-
սին սկսաւ : Սըր Հէնրի Լէյքարտ կի-
րակի օրը Վեհ : Սուլթանին ներկայա-
ցաւ , և երկուշաբթի օրն ալ Բ. Գրա-
նը երթալով՝ նախարարաց հետ
տեսակցութիւն ունեցաւ :

Երկուշաբթի առաւ Սիմանդուլի
մէջ հետեւեալ հետաքրքրական լու-
րը կը կարդամք .

« Ստիկանութեան նախարար Հա-
ֆիզ փաշան արքունեաց Միւշիք Տէր-
վիշ փաշան , Վեհ : Սուլթանին թիկ-
նապահներէն մին և մայրաքաղաքիս
նաւահանգստին վերապետուցը դի-
շերը Լիման-Օսմանին անցուցին և Պը-
րինիսիէն եկող Աւսարական շողենա-
ւին գալատեանն սպասեցին : Այս
շողենաւը պիտի պաշարուի և հա-
ւանականաբար անոր մէջ գտնուող
բարձրաստիճան անձ մը պիտի ձեր-
բակալուի : »

Այս առաւ վաղըթի մէջ ալ հե-
տեւալ կը կարդամք :

« Նախարար Խալիկի որդիներէն
Հաֆիզ փաշան ինչ ինչ նիւթից վրաց
վեհ : Սուլթանին հետ տեսնուելու
համար երկու շաբթի օրը մայրաքա-
ղաք եկաւ : Իւր դարստեանը վե-
րայ առաջուց լուր չէր տրուած , և
հետեւաբար տեղ չէր պատրաստուած
իրեն համար . ուստի՝ Վեհ : Սուլ-
թանին առաջին սենեկապետին ա-
պարանքը տարուեցաւ :

Մայրաքաղաքիս դրամական հաս-
տատութեանց և սեղանաւորաց հետ
վերջերս կնքուած պայմանագրու-
թիւնը գործադրել սկսաւ : Անոնց
թողուած եկամտից վարչութիւնն ,
երէկ իրենց յանձնուեցաւ , իսկ մաք-
սատան հասցիները կառավարու-
թեան վերադարձան :

Հայաստանի մէջ Արաքիւրտէն մին-
չե Պայտղիտ , Պայազիտէն մինչև Վան
և Վանէն մինչև Պաշալէ տարած
ւող սովը Թուրք-Պարսկական սահ-
մանագլխին անդիլի կողմն ալ զգալի
եղած է , և վերջին լրոց նայելով ,
Ռուսիոյ դաւառին մէջ սաստիկ սով
կը տիրէ :

Վաղըթ իւր երէկուան թուով
հետեւեալ կը հրատարակէ .

« Լուր եղած լինելով թէ Սե-
բաստիայէն բաղմաթիւ Հայեր հարեւ-
տահարութեանց պատճառաւ գաղ-
թել կը յանդգնին , իրողութիւնը
տեղական կառավարութեան հար-
ցուեցաւ : (Ինչպէ՞ս էր) » նա ալ պա-

